

ISSN 1829-2925

ԾՈՂԻԿ

Shoghik
2026/4



AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Հովհաննես Շարամբեյան՝ Դիլիջանի դաշտային ծաղիկները, 1984

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Հասմիկ Հարությունյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Editorial Board:
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Hasmik Harutyunyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01U 000035
Հրատարակչության 25-րդ տարի

«Շողիկից» մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA) **© ՀԱԵ / ECA**

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 3.000:
Տարածվում է անվճար:

Իմաստո՞ւն, թե պարզապես գիտելիք



Օրվա ընթացքում մենք անդադար նոր բաներ ենք լսում ու սովորում. դպրոցում՝ զանազան գիտելիքներ, տանը՝ ծնողներից՝ խորհուրդներ, եկեղեցում՝ Աստծու Խոսքը, ընկերներից կամ համացանցից՝ բազմաթիվ տեղեկություններ: Թվում է՝ մեր գլուխն օր օրի լցվում է գիտելիքով, բայց արդյո՞ք շատ բան իմանալ նշանակում է իմաստուն լինել:

Պատկերացրու՝ դու սպունգ ես, իսկ քո սովորած ամեն բան՝ ջուր: Սպունգը կարող է մեծ քանակությամբ ջուր ներծծել, բայց մինչև այն չսեղմենք, չենք իմանա, թե իրականում որքան ջուր է կուտակվել դրա մեջ: Նույնը գիտելիքի պարագայում է. այն իրական արժեք է ստանում այն ժամանակ, երբ կիրառվում է: Եթե գիտենք, որ պետք է ներել, բայց չենք ներում, այդ գիտելիքն անօգուտ է: Եթե սովորել ենք, որ պետք է օգնել, բայց անտարբեր ենք մեր կողքինի հանդեպ, նշանակում է՝ մեր սովորածը դեռ չի դարձել իմաստություն:

Աստվածաշնչում գրված է՝ իմաստուն է նա, ով լսում է Աստծու Խոսքը և ապրում դրա համաձայն:

Ուրեմն եկե՛ք լինենք իմաստուն՝ գործի դնելով այն գիտելիքը, որ ստանում ենք ամեն օր:

Հասմիկ Հարությունյան

Սողոմոնն իմաստություն է խնդրում

Գաբավոնում գիշերը երազում Տերը երևաց Սողոմոնին և ասաց. «Խնդրի՛ր, թե քեզ ինչ տամ»:

Եվ Սողոմոնն ասաց. «Դու մեծ ողորմածություն արեցիր իմ հայր Դավթին՝ քո ծառային, և նա հավատարմությամբ, արդարությամբ և անկեղծ սրտով ընթացավ քո առաջ՝ քեզ հետ, և Դու քո այդ մեծ ողորմածությունը պահեցիր նրա համար և նրան մի որդի տվեցիր, և նա այսօր նստած է նրա աթոռին:

Արդ, Տե՛ր իմ Աստված, դու թագավոր դարձրիր քո ծառային իմ հայր Դավթի փոխարեն, բայց ես մի փոքր տղա եմ և կառավարելու մեջ անվարժ եմ: Եվ քո ծառան քո ընտրած ժողովրդի մեջ է, մի մեծ ժողովրդի, որի շատությունը ո՛չ թիվ ունի և ո՛չ էլ հաշիվ:
Ուրեմն՝ իմաստությո՛ւն տուր քո ծառային՝ քո ժողովրդին դատելու, բարին ու չարն իրարից զանազանելու, որովհետև ո՞վ կարող է դատել քո այս մեծ ժողովրդին»:

Տիրոջը հաճելի եղավ այդ խոսքը, որ Սողոմոնը խնդրեց: Եվ Աստված ասաց նրան. «Որովհետև դու այդ բանը խնդրեցիր և քեզ համար երկար կյանք չխնդրեցիր, հարստություն չխնդրեցիր քեզ համար և քո թշնամիների հոգիները չխնդրեցիր, այլ արդար դատաստան անելու իմաստություն խնդրեցիր, ահա քո խոսքի համաձայն կանեմ: Ես քեզ տալիս եմ իմաստություն և հանճարեղ սիրտ, այնպես որ քեզնից առաջ քեզ նմանը չի եղել և քեզնից հետո էլ քեզ նմանը չի լինելու: Քեզ տալիս եմ նաև այն, ինչ դու չես խնդրել՝ թե՛ հարստություն, թե՛ փառք, այնպես որ քո կյանքի բոլոր օրերում քեզ նմանը չի լինելու թագավորների մեջ: Եվ եթե հնազանդվես ինձ և իմ կանոններին ու պատվիրաններին հետևես, ինչպես քո հայր Դավիթը հնազանդվեց, ապա ես պիտի երկարացնեմ քո կյանքի օրերը»: Սողոմոնը զարթնեց, և դա երազ էր: Նա եկավ Երուսաղեմ, կանգնեց Տիրոջ ուխտի տապանակի առջև, ողջակեզներ մատուցեց և խաղաղության զոհեր բերեց և ճոխ խնջույք արեց իր բոլոր ծառաների համար:

Գ Թագավորներ 3.5-15

Իսկ դու ի՞նչ կպատասխանեիր, եթե Աստված քեզ ասեր՝ «Խնդրի՛ր, քեզ ի՞նչ տամ»:

Պատկերե՛ր կամ գրե՛ր քո կարծիքը:

Աղոթի՛ր: Եթե խնդրանքդ համապատասխանում է Աստծո կամքին, ապա այն անպայման պատասխան կստանա:

Հարմանավ գիրք

Գիտե՞ս, որ Աստվածաշունչը մի յուրահատուկ գիրք է, որն իր մեջ ներառում է 66 գիրք:
Այն կազմված է երկու հիմնական բաժիններից՝ Հին Կտակարանից (39 գիրք) և Նոր Կտակարանից (27 գիրք): Աստվածաշունչը գրվել է մոտ 1500 տարվա ընթացքում՝ 40 հեղինակի կողմից: Դրա մեջ ըստ ոճի տարբերվում են պատմական, իմաստասիրական, բանաստեղծական, մարգարեական և այլ գրքեր:

Առաջին գիրքը Ծննդոցն է, իսկ վերջինը՝ Հայտնությունը: Հին Կտակարանը պատմում է աշխարհի արարման, մարդու և Աստծո հարաբերությունների, Իսրայելի ժողովրդի պատմության, Աստծո օրենքների ու խոստումների մասին: Նոր Կտակարանը պատմում է Հիսուս Քրիստոսի կյանքի, ուսուցումների, մահվան և հարության մասին:

Աստվածաշունչը համարվում է աշխարհի ամենաշատ թարգմանված, վաճառված և տարածված գիրքը:



Եթե տանն ունես Աստվածաշունչ, ապա թերթելով այն՝ հեշտությամբ կարող ես գրքերը տեղավորել ներքևում պատկերված գրադարակի մեջ:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ



ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ



Գրքերի անունները գրի՛ր ընթեռնելի ձեռագրով և ուղարկի՛ր ***Shoghik.am***
Ֆեյսբուքյան էջին: Եթե լինես առաջինը, կստանաս մրցանակ:

Գիտելիքի հետևից մինչև ո՞ր կգնայիր.

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Երբևէ փորձե՞լ ես հաշվել երկնքի աստղերը կամ մտածե՞լ ես, թե ինչու է Լուսինը մե՛կ կլոր, մե՛կ մահիկի նման: Ավելի քան 1300 տարի առաջ ապրած մի հայ պատանի ոչ միայն այս հարցերն էր տալիս, այլև պատրաստ էր ոտքով անցնել հարյուրավոր կիլոմետրեր, որպեսզի գտնի դրանց պատասխանները:



Այդ պատանին Անանիա Շիրակացին էր: Ասում են՝ Աստվածաշունչն ուսումնասիրելուց հետո Անանիան, Սողոմոնի իմաստությամբ ոգեշնչված, որոշում է շարունակել ուսումը: Նրան հետաքրքիր էին թվերի աշխարհը, աշխարհագրությունն ու աստղագիտությունը: Սակայն այն հեռավոր ժամանակներում «Հայոց մեր աշխարհում չկար այնպիսի մեկը, որ տիրապետեր իմաստությանը, և ոչ էլ նույնիսկ որևէ տեղ գիտական գրքեր էին ճարվում»,- գրել է Շիրակացին «Ինքնակենսագրականում»: Գիտելիքները խորացնելու միակ միջոցն այլ երկրներում ուսուցիչ գտնելն էր: Բայց դա հեշտ գործ չէր: Օրինակ՝ մոտ վեց ամիս աշակերտելով մի մաթեմատիկոսի՝ Անանիան տեսնում է, որ նա լավ չի տիրապետում առարկային, և հեռանում է նրանից՝ որոնումները շարունակելու համար:

Ի վերջո երիտասարդը Տրապիզոն քաղաքում հանդիպում է Տյուքիկոս Բյուզանդացի գիտունին և ութ տարի աշակերտում է նրան: Ուսուցչի հարուստ գրադարանը Անանիայի համար դառնում է երկրորդ ուսումնարան: Նա, մաթեմատիկայից բացի, ուսումնասիրում է նաև պատմություն, բժշկություն, աշխարհագրություն, աստղագիտություն և տոմարագիտություն:

Ուսումնառությունն ավարտելուց հետո Անանիան շտապում է վերադառնալ հայրենիք: Նա Շիրակում բացում է իր դպրոցը, որտեղ սովորելու են գալիս երիտասարդներ Հայաստանի տարբեր վայրերից: Շիրակացին ոչ միայն սովորեցնում էր, այլև դասագրքեր էր ստեղծում: Տասնամյակներ շարունակ հայ երեխաները թվաբանություն են սովորել նրա «Խնդրագիրք»-ով, որի մեջ կային նաև հետաքրքիր տեղեկություններ պատմությունից, արհեստներից, ինչպես նաև զվարճալի խնդիրներ և գլուխկոտրուկներ:



Շիրակացին նաև ուսումնասիրում էր Երկիրն ու Տիեզերքը: Նրա արտահայտած մտքերը չափազանց համարձակ էին իր ժամանակի համար. նա պնդում էր, որ Երկիրը գնդաձև է, իսկ Լուսինը սեփական լույս չունի, այլ անդրադարձնում է Արեգակի լույսը: Նա գիտականորեն բացատրում էր Արեգակի ու Լուսնի խավարումները և համարձակորեն վիճում էր բախտագուշակների հետ, որոնք մարդկանց ճակատագիրը կապում էին աստղերի դիրքի հետ: Երկրի գնդաձևության մասին նրա միտքը դարեր անց հաստատվեց նաև մեծ հայտնագործությունների ու շուրջերկրյա ճանապարհորդությունների շնորհիվ:

Այդ ընթացքը հեշտ չէր Անանիա Շիրակացու համար. լինելով բազմաշնորհ ու համարձակ իմաստասեր՝ նա հաճախ հալածվում էր խավարամիտների կողմից: Սակայն իր տոկունության, անշահախնդիր նվիրման ու բարության շնորհիվ նա կարողանում է իր ստացած գիտելիքը դարձնել օգտակար հաջորդ սերունդների համար:
Շիրակացու օրինակը ցույց է տալիս, որ սովորել նշանակում է ճանաչել Աստծո ստեղծած աշխարհը, հարցեր տալ, բացահայտել և իմացածն օգտագործել՝ ուրիշներին օգնելու համար: Ուստի մի՛ վախեցիր հարցեր տալուց, սովորի՛ր, բացահայտի՛ր և քո գիտելիքը դարձրո՛ւ օգտակար նվեր բոլորի համար:

Ահա Շիրակացու գլուխկոտրուկ-խնդիրներից մեկը: Դժվարանալու դեպքում կարող ես խնդրել, որ քեզ օգնեն:

Մի տղամարդ մտավ երեք եկեղեցի և առաջինում խնդրեց Աստծուն. «Տո՛ւր ինձ այնքան, որքան ես ունեմ, և քեզ կտամ 8 դահեկան»: Երկրորդ եկեղեցում նույնպես խնդրեց և տվեց 8 դահեկան: Երրորդում՝ նույնը, և, վերջիվերջո, նրա մոտ ոչինչ չմնաց:

Այսպիսով, պարզի՛ր, թե որքան գումար է նա ունեցել սկզբում:

ՄԵՐ ԲՈԼՈՐԻ «ԴԵՂԱՏՈՒՆԸ»

Երբ մտածում ենք դեղատան մասին, պատկերացնում ենք բազմաթիվ փոքրիկ դեղատուփեր, տարբեր անվանումներով տարաներ, դեղամիջոցներ: Դրանք բոլորն էլ նախատեսված են մարդու առողջական վիճակը բարելավելու համար: Բայց կա մի ուրիշ, շատ ավելի մեծ ու բնական «դեղատուն», որը կարելի է գտնել մեր շուրջը՝ լեռներում, անտառներում ու այգիներում:

Հայաստանն իսկապես Աստծո կողմից մեզ շնորհված հրաշագործ մի «դեղատուն» է, որի մասին վկայություններ ունենք դեռ անհիշելի ժամանակներից: Մեր բնության մեջ աճող բազմաթիվ խոտաբույսեր բացահայտվել ու օգտագործվել են բժշկության մեջ. դրանք դարմանել են վերքեր, բուժել հիվանդություններ:

Եկե՛ք միասին ուսումնասիրենք դրանցից մի քանիսը.

ՈՒՐՑ



Անուշաբույր այս բույսը հաճախ օգտագործում են մրսածության, հազի և կոկորդի ցավի ժամանակ:

Ուրցը կարող է օգնել նաև խորխի հեռացմանը և նպաստել շնչառության թեթևացմանը: Այն օգտակար է մարսողության համար, իսկ ժողովրդական բժշկության մեջ օգտագործվել է գլխացավի, ատամնացավի և բերանի խոռոչի որոշ խնդիրների դեպքում:

ԵՐԻՑՈՒԿ



Վստահաբար ծանոթ ես սպիտակաթերթիկ այս ծաղկին: Գոյություն ունի երիցուկի մոտ 20 տեսակ, որոնցից առավել հայտնի է դեղատնային երիցուկը:

Այն ունի հանգստացնող ազդեցություն, ինչն օգնում է հաղթահարել անհանգստությունն ու սթրեսը, և օգտագործվում է դեպրեսիայի բուժման ժամանակ: Կարգավորում է սրտի ռիթմը, արյան շրջանառությունը և խթանում է ուղեղի գործունեությունը: Երիցուկը կարգավորում է մարսողական համակարգը և կանխում է բորբոքային գործընթացները:

ԵԶԱՆ ԼԵԶՈՒ



Միգուցե քեզ այդքան էլ ծանոթ չէ այս բույսը, բայց այն համարվում է աշխարհի ամենաօգտակար դեղաբույսերից մեկը: Իր կպչուն հատկության շնորհիվ եզան լեզուն կարող է բուժել վերքերը ու նույնիսկ թեթևացնել միջատների խայթոցից առաջացած ցավը, քորն ու այլ տհաճ զգացողություններ: Բարելավում է մարսողությունը, իսկ տերևները նվազագույնի են հասցնում ստամոքսի բորբոքումն ու օգնում են վերականգնել աղիքային միկրոֆլորան:

Եզան լեզուն համարվում է արյունը բնական ճանապարհով մաքրող բույսերից մեկը և կարող է օգնել թեթևացնել սնդիկով թունավորման նշանները:

ԵՂԻՆՋ



Երբ եղինջ ես տեսնում, վստահաբար հեռու ես փախչում դրանից, որպեսզի չխայթի, բայց այն, որպես դեղաբույս, հնուց ի վեր հայտնի է եղել մարդկությանը: Բույսի տերևներն ու սերմերն օգտագործել են գլխուղեղի ախտահարումների, քթից արյունահոսության, ատամների հիվանդության, բրոնխային ասթմայի և շնչուղիների բորբոքումների ժամանակ՝ հաճախ զուգակցելով մեղրի և որոշ դեղաբույսերի հետ: Հոդացավերի ժամանակ եղինջով խայթում են մարմնի ցավոտ մասերը: Եղինջի եփուկի պարբերաբար օգտագործումն զգալիորեն բարելավում է շաքարախտով հիվանդների վիճակը:

Այս հրաշալի «դեղատունը» մեզ հիշեցնում է Աստծո խնամքի և հոգատարության մասին: Չպետք է անտեղի պոկենք բույսերը, վնասենք ծառերը, արմատախիլ անենք ծաղիկները կամ աղտոտենք բնությունը: Եկե՛ք սիրենք, ճանաչենք և պահպանենք այն ամենը, ինչ Աստված ստեղծել է մեզ համար:

«ԹԸԽԿ, ԹԸԽԿ, ԲԱՑԻ՛Ր ԴՈՒՌԸ, ԿԱՆՉԻ՛Ր ԵՎ ՏԵ՛Ս ԱՎԵԼԻՆ»

2026 թ. ամառային ճամբարները երեխաների, պատանիների և երիտասարդների համար դարձան բացահայտումների, նոր ընկերությունների, ուրախության և հոգևոր աճի յուրահատուկ շրջան: Այս ընթացքում անցկացվեց չորս ճամբար՝ տարբեր տարիքային խմբերի համար, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատուկ թեման ու ուղերձը:

Մանկական ճամբարի թեման էր «Թըխկ, թըխկ, բացի՛ր դուռը», որին երեք հերթափոխով մասնակցեց 630 երեխա: Ճամբարը երեխաներին հրավիրում էր բացել իրենց սրտի դուռը և ճանաչել Աստծուն: Ամեն օր նրանք խորհրդանշական կերպով բացեցին մեկ փակ դուռ, որի հետևում բացահայտեցին իրենց դերը և սովորեցին լինել սիրող զավակ ընտանիքում, հավատարիմ ընկեր շրջապատում, պատասխանատու քաղաքացի հայրենիքում և նվիրված քրիստոնյա եկեղեցում: Ազատ պահերին երեխաները զբաղվեցին «շինարարությամբ». նրանք քայլ առ քայլ կառուցեցին տուն՝ յուրաքանչյուր հատված կապելով Աստվածաշնչի կարևոր ճշմարտությունների հետ:



Պատանեկան և մանկապատանեկան ճամբարների թեման էր «Կանչի՛ր 33.3»: Այն հիմնված էր Երեմիա 33.3 համարի վրա, որը դարձավ նաև առավոտյան խորհրդածությունների թեման: Բիբլոդրամաների միջոցով մասնակիցները ծանոթացան Աստծո կանչին՝ Սամուելի և Պողոսի օրինակով, և մարդու կանչին դեպի Աստված՝ Կույր Բարտիմեոսի և Հովնանի օրինակով: Սերտողությունների շնորհիվ նրանք սովորեցին ոչ միայն Աստծո կանչը լսելու, այլև դժվարության և փոթորիկների մեջ Աստծուն դիմելու, կանչելու, Նրան վստահելու և հետևելու անհրաժեշտության մասին: Պատանեկան ճամբարն անցկացվեց երեք հերթափոխով՝ 570 մասնակցով, իսկ մանկապատանեկանը՝ երկու հերթափոխով՝ 400 մասնակցով:

Երիտասարդական ճամբարի թեման էր «Տե՛ս ավելին»: Դրա նպատակն էր օգնել յուրաքանչյուր երիտասարդի անձամբ հանդիպել Աստծուն, ճանաչել Նրա գործը սեփական կյանքում և ճամբարից հեռանալ նոր հայացքով՝ տեսնելով ավելին, քան հնարավոր է տեսնել միայն ֆիզիկական աչքերով: Բիբլոդրամաների հիմքում Դավթի կյանքի երեք փուլերն էին:

Այսպիսով, այս տարվա ճամբարների ընդհանուր ուղերձը կարելի է ամփոփել մեկ նախադասությամբ. «Թըխկ, թըխկ, բացի՛ր դուռը, կանչի՛ր և տե՛ս ավելին»:



Բարեկրթություն

Երբևէ նկատե՞լ ես, որ կան մարդիկ, որոնց հետ զրուցելը հաճույք է պատճառում: Նրանք բարևում են, ժպտում, ուշադիր լսում, շնորհակալություն հայտնում և չեն վիրավորում ուրիշներին: Նման մարդկանց հաճախ անվանում ենք «բարեկիրթ»:

Բարեկրթությունը մեր վերաբերմունքն է ուրիշների նկատմամբ: Այն արտացոլվում է մեր խոսքի, ձայնի հնչերանգի և արարքների մեջ:

Բոլորս գիտենք, որ պետք է բարևել, հրաժեշտ տալ, շնորհակալություն հայտնել և սխալվելու դեպքում ներողություն խնդրել: Սրանք բարեկրթության ամենահայտնի կանոններից են:

Սակայն բարեկրթությունը միայն այսքանով չի սահմանափակվում. կան նաև այլ կարևոր կանոններ, որոնց մասին գուցե այնքան հաճախ չենք մտածում:

Եկե՛ք տեսնենք, թե որոնք են բարեկրթության մյուս կանոնները:

Հեռախոսի գործածություն

Երբ քեզ հետ ինչ-որ մեկը խոսում է, իսկ դու անընդհատ նայում ես հեռախոսիդ, նա կարող է մտածել, որ իր խոսքը քեզ համար կարևոր չէ:

Փորձի՛ր խոսելու ընթացքում հեռախոսը մի կողմ դնել և ուշադրությունդ ուղղել զրուցակցիդ: Վերջերս տարածված երևույթ է դարձել հանրային վայրերում, օրինակ՝ տրանսպորտի մեջ, հեռախոսով բարձրաձայն ու երկար խոսելը: Ըստ վարվեցողության կանոնների՝ կարելի է զրույցը հետաձգել «Ներիր, խոսելը հարմար չէ...», «Զանգեք մի քանի րոպեից ...» արտահայտություններով: Իսկ եթե զրույցը հրատապ է, պետք է սահմանափակվել կարճ, չեզոք արտահայտություններով. «Այո՛», «Ո՛չ», «Չգիտեմ», «Հետո կորոշենք» և այլն:



Ձայնի հնչերանգ

Կարևոր է ոչ միայն այն, թե ինչ ես ասում, այլև ինչպես ես ասում:
Օրինակ՝ «Ինձ գրիչ տուր» և «Խնդրեմ, գրիչ կտա՞ս» ձևակերպումները նույն կարիքն են արտահայտում, բայց երկրորդը քաղաքավարի է:

Խոսելիս պետք չէ խոսել շատ կամաց, որպեսզի դիմացինը չլարվի և չխնդրի ասածը կրկնել: Միևնույն ժամանակ, եթե ընկերներիդ հետ ես և ուզում ես ինչ-որ հետաքրքիր բան պատմել, պարտադիր չէ այնքան բարձր խոսել, որ ամբողջ սենյակը լսի:


Հասարակական վայրերում՝ ավտոբուսում, խանութում, գրադարանում կամ այլ այլուր, աշխատի՛ր խոսել այնպես, որ չխանգարես մյուսներին:

Հարգանք ուրիշների ժամանակի նկատմամբ


Եթե խոստացել ես ինչ-որ տեղ գնալ կամ ինչ-որ մեկին հանդիպել, աշխատիր ժամանակին հասնել: Իսկ եթե ուշանում ես, լավ կլինի այդ մասին տեղեկացնել և ներողություն խնդրել: Մյուսների ժամանակը նույնպես արժեքավոր է:

Բարեկրթության կանոնները կարծես բխում են աստվածաշնչյան «Ոսկե կանոնից», որը գրված է Մատթեոս 7.12-ում. «Այն ամենը, ինչ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց»: Եթե ուզում ենք, որ մեզ ուշադրությամբ լսեն, հարգանքով խոսեն և գնահատեն մեր ժամանակը, մենք էլ պետք է նույն կերպ վերաբերվենք ուրիշներին: Ահա թե ինչու «Ոսկե կանոնը» կարող է դառնալ մեր ամենօրյա վարվեցողության լավագույն ուսուցիչը:









ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Երբևէ հետաքրքրվե՞լ ես, թե ովքեր են համարվում աշխարհի ամենահեղինակավոր մարդիկ: Եվ ինչո՞ւ են նրանց պարգևատրում մեդալով կամ մրցանակով:

Շատ տարիներ առաջ՝ 19-րդ դարում, ապրում էր շվեդ գիտնական Ալֆրեդ Նոբելը: Նա հայտնագործեց պայթուցիկ նյութ դինամիտը: Սկզբում մարդիկ այն օգտագործում էին հանքարդյունաբերության կամ շինարարական աշխատանքների համար: Բայց հետո նա ցավով իմացավ, որ երբեմն իր հայտնագործությունն օգտագործվում է պատերազմների և կործանման համար:

Նոբելը սկսեց մտածել. «Ինչպե՞ս կարող եմ թողնել մի բան, որը կօգնի աշխարհին, այլ ոչ թե կվնասի»:

Այդպես նա որոշեց իր ողջ հարստությունը թողնել այն մարդկանց, որոնք կօգտագործեն իրենց գիտելիքը՝ բարիք գործելու համար:

Նա իր կտակում գրեց, որ իր գումարով ամեն տարի պետք է պարգևատրվեն այն մարդիկ, ովքեր իրենց իմաստությամբ, աշխատասիրությամբ և բարի գործերով օգնել են մարդկությանը: Այդ մրցանակը կոչվեց Նոբելյան մրցանակ և ահա՛ թե ինչ տեսք ունի այն.



Ամեն տարի այս մրցանակը տրվում է 6 ոլորտներում.
Խաղաղության նոբելյան մրցանակը տրվում է նրանց, ովքեր օգնում են, որ աշխարհում պատերազմ չլինի:

Գրականության նոբելյան մրցանակը տրվում է գրողներին, ովքեր խորը ու նշանակալի գրական արժեքներ են ստեղծում:



Քիմիայի նոբելյան մրցանակը տրվում է այն գիտնականներին, ովքեր ուսումնասիրում են նյութերի հատկությունները և հայտնագործություններ անում այդ բնագավառում:

Ֆիզիկայի նոբելյան մրցանակը տրվում է նրանց, ովքեր բացահայտում են, թե ինչպես է աշխատում բնությունը:


Բժշկության նոբելյան մրցանակը տրվում է այն բժիշկներին, ովքեր նշանակալի հայտնագործություններ են անում այդ ոլորտում:

Տնտեսագիտության նոբելյան մրցանակը տրվում է նրանց, ովքեր օգնում են հասկանալ ու բարելավել երկրների տնտեսությունը:

Նոբելյան մրցանակ ստանալը հեշտ չէ: Մեծ հանձնաժողովներ երկար ժամանակ ուսումնասիրում են թեկնածուների աշխատանքերը և ընտրում միայն լավագույններին:


Բայց այդ մեդալը, շքեղ պարգև լինելուց բացի, նշանակում է, որ մարդն իր իմաստությամբ փոխել է աշխարհը դեպի լավը:
Այս ամենը հիշեցնում է մի թագավորի մասին, ում իմաստությունն անգերազանցելի էր: Նրա մասին դու արդեն կարդացել ես այս համարի սկզբում: Սողոմոնը կարող էր Աստծուց շատ բաներ խնդրել՝ ոսկի, ուժեղ բանակ, երկար կյանք... Բայց նա խնդրեց իմաստություն, որպեսզի կարողանա ճիշտ կառավարել երկիրը և օգնել մարդկանց:
Աստված ուրախությամբ քեզ էլ կտա իմաստություն, եթե խնդրես անկեղծ սրտով: Աստվածաշնչում գրված է՝ «Եթե որևէ մեկը իմաստության կարիք ունի, թող Աստծուց խնդրի, և Աստված նրան կտա»:

Այո՛, Աստված պատրաստ է քեզ էլ իմաստություն տալ: Եվ երբ քո գիտելիքներով օգտակար ես լինում ուրիշներին, դու էլ ես դառնում մի փոքրիկ «Նոբելյան մրցանակակիր» քո շրջապատում:



Արվեստը, որը ճանապարհ է անցնում դեպի մեզ

Սիրելի՛ ընթերցող, արդյո՞ք գիտես, որ արվեստի գործերը կարող են երկար ճանապարհ անցնել, հատել սահմաններ և տարիներ անց վերադառնալ իրենց հայրենիք: Հայաստանի ազգային պատկերասրահի մի քանի կարևոր ցուցանմուշներ պատմում են հենց այդպիսի պատմություններ՝ արվեստի, հիշողության և մարդկային զգացմունքների մասին:



Արշիլ Գորկի.
«Նյու Յորք – Երևան.
նոր ճեռքբերում»

Արշիլ Գորկին՝ ծննդյան անունով Ոստանիկ Ադոյանը, հայազգի նշանավոր նկարիչ էր, որը մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային ժամանակակից արվեստի զարգացման վրա: Նրա՝ մոտ 1944 թվականին ստեղծված «Անվերնագիր» աշխատանքը Հայաստանի կառավարությունը ձեռք է բերել Sotheby's միջազգային աճուրդում և փոխանցել Հայաստանի ազգային պատկերասրահին:

Այս ձեռքբերումը կարևոր է, քանի որ Գորկու արվեստը նորովի է կապում Հայաստանի և աշխարհասփյուռ հայության մշակութային պատմությունը: Ցուցահանդեսում նրա աշխատանքը ներկայացվել է նաև հայաստանյան ու սփյուռքահայ արվեստագետների ստեղծագործությունների համատեքստում՝ ընդգծելով նրա արվեստի ազդեցությունը նրանց ստեղծագործական ուղու վրա: Նախագծում նախատեսված էր նաև վիրտուալ իրականության միջոցով ծանոթանալ նկարչի ստեղծագործական ուղուն:

Ինչո՞ւ է սա կարևոր: Այս պատմությունը ցույց է տալիս, որ արվեստի գործի վերադարձը հայրենիք պարզապես թանգարանային ձեռքբերում չէ: Դա նաև մշակութային հիշողության վերականգնում է:

Վարդգես Սուրենյանց. «Մարդկության դեմքը»

Հայաստանի ազգային պատկերասրահ



Վարդգես Սուրենյանցը հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչներից է: Նրա «Լքյալը» կտավը ստեղծվել է 1894 թվականին, սակայն Հայաստանում առաջին անգամ ցուցադրվելու հնարավորություն է ստացել ավելի քան 130 տարի անց՝ Ղազախստանի Աբիլխան Կաստեևի անվան արվեստի ազգային թանգարանից ժամանակավոր փոխառությամբ:

Ցուցահանդեսի առանձնահատկությունն այն է, որ «Լքյալը» ներկայացվում է Սուրենյանցի երկու այլ կարևոր գործերի՝ «Ոտնահարված սրբություն» (1895) և «Ջարդից հետո» (1898) կտավների հետ միասին: Ներկայացված են նաև այլ հայ արվեստագետների աշխատանքներ, որոնք անդրադառնում են մարդու ճակատագրին, ցավին, արժանապատվությանը և կարեկցանքին:

Ինչո՞ւ է սա կարևոր: Սուրենյանցի արվեստը հիշեցնում է, որ նկարչությունը միայն գեղեցիկ պատկերներ ստեղծելու միջոց չէ: Այն կարող է բարձրաձայնել պատմական ողբերգությունների մասին և պաշտպանել մարդկային արժանապատվության գաղափարը:

Նյութը պատրաստեց
Արման Սարգսյանը



Ո՞վ եմ ես



Կտրի՛ր պատկերները և ընկերներիդ հրավիրիր «Ո՞վ եմ ես» ինտելեկտուալ խաղը խաղալու՝ աստվածաշնչյան կերպարներով:























